

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԵՎ ԲՈՒՈՐՆ ԵՆ ՀԱՇՎԵՏՈՒ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՆԱԲԱՐ ԿՆԵՐԴՐԿԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողովի ընդունմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ «Օրենսդրական Փաթեթ»), որի շրջանակներում նախատեսվում է ներդնել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բոլոր քաղաքացիների եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ:

**Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է ներդնել ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ: Համակարգի ներդրումը իրականացվելու է փուլային եղանակով: Սույն իրավական ակնարկում կգտնեք Օրենսդրական Փաթեթով առաջարկվող փոփոխությունների բուն էության նկարագրությունը:**

Հաշվի առնելով Օրենսդրական Փաթեթի շահառուների լայն շրջանակը, ինչպես նաև հիմք ընդունելով դրա մասին իրազեկվածության կարևորությունը՝ սույն իրավական ակնարկում փորձել ենք հակիրճ և

համակարգված կերպով ներկայացնել Օրենսդրական Փաթեթով առաջարկվող հիմնական փոփոխությունների և լրացումների բուն էությունը:

### ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Օրենսդրական Փաթեթով առաջարկվում է ներդնել համակարգ, որի շրջանակներում որոշակի չափանիշների համապատասխանող ֆիզիկական անձինք պարտավոր կլինեն ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ «Հարկային Մարմին») ներկայացնել իրենց եկամուտների վերաբերյալ տարեկան հայտարարագրեր: Եկամուտների հայտարարագրերի ներկայացման պարտավորության առաջացման համար օրենսդիրը նպատակադրված է սահմանել երկու հիմնական նախապայման՝

- Ֆիզիկական անձը պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի,
- ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձը պետք է նաև հանդիսանա ՀՀ ռեզիդենտ<sup>1</sup>:

Օրենսդրական փաթեթի ընդունման դեպքում այս պայմանների համապատասխանող յուրաքանչյուր ֆիզիկական անձ (այդ թվում նաև անչափահաս ֆիզիկական անձը՝ օրինական ներկայացուցչի միջոցով) մինչև հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 20-ը պարտավոր կլինի ներկայացնել համապարփակ տեղեկատվություն այդ տարվա ընթացքում իր ստացած եկամուտների վերաբերյալ: Օրենսդրական Փաթեթով նախատեսվում է, որ Հարկային Մարմինը իր մոտ առկա տվյալների հիման վրա, ինքնաշխատ եղանակով, կարող է հայտարարագրում նախալրացնել հայտարարագրման ենթակա որոշակի տեղեկատվություն: Հարկ է նկատել, որ Օրենսդրական Փաթեթի շրջանակներում հայտարարագրման պարտավորություն է նախատեսվում նաև այն անձանց համար, ովքեր հաշվետու տարվա ընթացքում ընդհանրապես եկամուտներ չեն ստացել:

### ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԵՐԸ

Հաշվի առնելով առաջարկվող փոփոխությունների ծավալը և համակարգի ներդրման համար ադապտացիոն որոշակի ժամանակաշրջանի անհրաժեշտությունը՝ Օրենսդրական Փաթեթով նախատեսվում է հայտարարագրման համակարգի փուլային ներդրում: Մասնավորապես առաջարկվում է առաջիկա մի քանի հաշվետու տարիների ընթացքում հայտարարագրման պարտավորություն սահմանել միայն որոշակի կատեգորիայի անձանց համար, իսկ հայտարարագրման համընդհանուր համակարգ նեղնել 2026 թվականից:

Այսպիսով, **2023** թվականի հաշվետու տարվա համար հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կունենան ՀՀ ռեզիդենտ հանդիսացող այն քաղաքացիները, ովքեր՝

1. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք հարկային տարում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվել են 183 և ավելի օր:

- հանդիսանում են Ոհանդիսացել են՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող
- հանդիսանում են Ոհանդիսացել են՝ ռեզիդենտ նոտար՝ անձնական եկամուտների մասով,
- հանդիսանում են Ոհանդիսացել են՝ 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության բաժնետեր Սփայատեր, անդամ՝

կամ

○

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,
- 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,
- 2023 թվականի ընթացքում փաստացի օգտվել են եկամտային հարկի վերադարձման համակարգից,
- 2023 թվականի ընթացքում եկամուտներ են ստացել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից.

2. **2024** թվականի հաշվետու տարվա համար հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կունենան ՀՀ ռեզիդենտ հանդիսացող այն քաղաքացիները, ովքեր

- 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացել են հարկվող եկամուտ,
- 2024 թվականի ընթացքում հանդիսացել են վարձու աշխատող,
- 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.
- հանդիսանում են Ոհանդիսացել են՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող
- հանդիսանում են Ոհանդիսացել են՝ ռեզիդենտ նոտար՝ անձնական եկամուտների մասով,
- հանդիսանում են Ոհանդիսացել են՝ 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության բաժնետեր Սփայատեր, անդամ,

կամ

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,
- 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,
- 2024 թվականի ընթացքում փաստացի օգտվել են եկամտային հարկի վերադարձման համակարգից,
- 2024 թվականի ընթացքում եկամուտներ են ստացել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից.

2025 թվականի հաշվետու տարվա համար եկամուտների հայտարարագիր կներկայացնեն ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ բոլոր քաղաքացիները:

Օրենսդրական Փաթեթով նախատեսվում է նաև սահմանել տուգանքներ եկամուտների հայտարարագրերը սահմանված ժամկետում չներկայացրած անձանց նկատմամբ: Յուրաքանչյուր կատեգորիայի անձի համար սահմանված է տուգանքի տարբեր սահմանաչափ. Ընդհանուր առմամբ տուգանքի չափը տատանվում է 20.000 ՀՀ դրամից մինչև 350.000 ՀՀ դրամի միջակայքում:

Օրենսդրական Փաթեթը առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Օրենսդրական փաթեթի՝ երկրորդ ընթերցմամբ ընդունվելու դեպքում այն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ից

**Ծանուցում: Այստեղ ներկայացված մտքերը ունեն տեղեկատվական բնույթ և չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն:**

Շուշանիկ Վարդանյան  
Իրավախորհրդատու, փաստաբան  
[svardanyan@tk.partners](mailto:svardanyan@tk.partners)



Գոհար Թովմասյան  
Իրավախորհրդատու, փաստաբան  
[gtovmasyan@tk.partners](mailto:gtovmasyan@tk.partners)

